ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

1965 թ. Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ լույս տեսավ Խ. Փորֆշեյանի «Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը» ժողովածուն. որը լայն ընդունելություն գտավ ընթերցող հասարակության, մասնավորապես Ռոստովի և Հյուսիսային Կովկասի հայաբնակ շրջանների աշխատավորության կողմից: Ինստիտուտի և հրատարակչության հասցեով ստացվեցին բազմաթիվ պահանջներ ու առաջարկներ՝ վերահրատարակելու ժողովածուն:

Ընդառաջելով այդ ցանկություններին, ինստիտուտը որոշեց ժողովածուն վերահրատարակել՝ լրացնելով այն հեղինակի ու այլ բանահավաքների հավաքած նոր նյութերով և միացնել արվեստի ինստիտուտի կողմից հրատարակության պատրաստված Մ. Լյուլևեյանի «Նոր Նախիջևանի և շրջակա գյուղերի հայ ժողովրդական երգերն ու եղանակները» հավաքածուն:

«Հայ ազգագրություն ու բանահյուսություն» (նյութեր և ուսումնասիրություններ) մատենաշարի սույն երկրորդ գրքի առաջին և երկրորդ մասերը լրացնում են մեկը մյուսին և տալիս են Նոր Նախիջևանի հայ գաղթօջախի ժողովրդական բանահյուսության ու երաժշտության պատկերը: Գրքի նյութերը դասակարգել, խմբագրել ու տպագրության են պատրաստել՝ Ա. Նազինյանը (բանահյուսության բաժինը) և Ա. Քոչարյանը (երաժշտության բաժինը): Բնագրերի բարբառային հնչման տառադարձությունը ստուգել ու հիզրտել են Շ. Շահինյանը և Ա. Հովակիմյանը:

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ